ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 15-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	<<Մուլտի տրանսպորտ>> ՍՊԸ 27.09.2022 11:01:24	Սույն որոշումը ընդունվելուց հետո արդյոք փոխադրող ընկերությունները չեն կանգնելու այն փաստի առաջ, որ մեկ վարորդի տուգանային միավորները և դրանցից առաջացած մալուսները ազդեն ընկերության ապահովագրական պատմության վրա	Բյուրոն ճանապարհային երթևեկության ընթացքում առաջացող պատահարների կանխմանն ուղղված միջոցառումների շրջանկաներում, ի թիվս, այլոց, նախատեսել է 2023 թվականից նաև առավել սերտ կապ ստեղծել ԱՊՊԱ ոլորտում ապահովադիրների կողմից վճարվող ապահովագրավճարների չափի և նրանց կողմից ճանապարհային երթևեկության	Հարցադրումը Նախագծի փոփոխություն չի ենթադրում, ներկայացվել է հարցի պարզաբանումը:

			անվտանգության բնագավառում դրսևորվող կարգապահության միջև: Մասնավորապես՝ նախատեսվում է ապահովագրավճարի հաշվարկում հաշվի առնել նաև ապահովադիրների վարորդական պատմությունը, այսինքն՝ նրանց պատկանող ավտորտրանսպորտային միջոցների մասնակցությամբ կատարված վարչական իրավախախտումների քանակը և (կամ) դրանց համար համապատասխան վարորդներից հանված միավորների (բալերի) քանակը: Այսպսի կապակցումն ավելի կմեծացնի վարորդներին տրվող միավորների (բալերի) կարևորությունը՝ նպաստելով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման նվազեցմանը, ինչն էլ, իր հերթին, խթան կհանդիսանա պատահարների կանխարգելմանը: Սույն նախագծով պարզապես սահմանվում է օրենքի պահանջների իրականացմանն	

			ուղղված տեղեկատվության փոխանակման ձևաչափը: Ստացված տեղեկատվության օգտագործման մեթոդաբանությունը և դրա ազդեցությունն ապահովադիրների վրա պետք է որոշվի արդեն Բյուրոյի կանոններով: Եվ ամենայն հավանականությամբ՝ ապահովադրին պատկանող տրանսպորտային միջոցների օգտագործմամբ կատարված խախտումները (դրանց գծով հանված միավորները) կազդեն այդ ապահովադրից գանձվող ապահովագրավճարի չափի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե ում կողմից է փաստացի կատարվել իրավախախտումը (ինչպես դա գործող իրավակարգավորումներով իրականացվում է պատահարների հետևանքով վճարվող ապահովագրական հատուցումների գծով, որոնցից առաջացող մալուսները հաշվեգրվում են անմիջապես ապահովադրին՝ անկախ, թե ով է վարել տրանսպորատյին միջոցը): Նշվածը	

			կխթանի, որպեսզի ապահովադիրներն առավել պատասխանատվությամբ վերաբերեն այն հարցին, թե ում են վստահում իրենց պատկանող տրանսպորտային միջոցների վարումը:	